ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ Թվինինգ ծրագրի փակման արարողությունը

2017թ. հուլիսի 7-ին Հայաստանը պաշտոնապես կփակի «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ Թվինինգ ծրագիրը:

Եվրոպական միության կողմից 1 000 000 մլն եվրո բյուջեով ֆինանսավորվող ծրագրի **նպատակն** էր աջակցել Հայաստանում պաշտոնական վիճակագրության արդիականացմանը՝ ներդնելով նոր և եվրոպական ստանդարտներին համահունչ մեթոդաբանություններ և ընդլայնելով պաշտոնական վիճակագրության տարածումը հանրության շրջանում: Ծրագիրը կենտրոնացած էր վեց թեմատիկ ոլորտների վրա. վիճակագրության տարածում, ժողովրդագրական վիճակագրություն, աշխատաշուկայի վիճակագրություն, աղքատության վիճակագրություն, ինովացիայի վիճակագրություն և ջրի հաշիվներ:

Ծրագրի ամբողջ ընթացքում ուշադրության կենտրոնում է եղել առկա վարչական ռեգիստրների օգտագործումը՝ վիճակագրական տեղեկատվության արտադրման նպատակով:

Թվինինգ ծրագիրն իրականացվել է Դանիայի վիճակագրության կողմից Ֆինլանդիայի վիճակագրության, Իտալիայի Իստատի և Լիտվայի վիճակագրության հետ համագործակցությամբ և Եվրոպական միության աջակցությամբ:

Ծրագիրն իրականացվում է սկսած 2015թ. օգոստոսից:
Փակման արարողությանը կներկայցվեն ծրագրի ամենակարևոր արդյունքները:

Ամսաթիվը և ժամը. **2017թ. հուլիսի 7-ին, ժամը՝ 09:30**
Վայրը. **Էրեբունի պլազա բիզնես կենտրոն («Էրեբունի» կոնֆերանսների դահլիճ), Վ. Սարգսյան, 26/1**

Լրացուցիչ տեղեկությունների համար՝
պրն. Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգ մշտական խորհրդատու, Դանիայի վիճակագրություն, pah@dst.dk
տկն. Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, info@armstat.am

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից
http://eeas.europa.eu/delegations/armenia

Ծրագիրն իրականացվում է Դանիայի վիճակագրության կողմից Ֆինլանդիայի վիճակագրության, Իտալիայի Իստատի և Լիտվայի վիճակագրության հետ համագործակցությամբ և Եվրոպական միության աջակցությամբ: Ծրագրի շահառուն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունն է (ՀՀ ԱՎԾ):

"Եվրոպական միությունը բաղկացած է 28 անդամ երկրներից, որոնք որոշել են աստիճանաբար միավորել իրենց փորձառությունը, ռեսուրսները և ճակատագրերը: 50 տարվա ընդլայնման ընթացքում նրանք միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունները: